

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ԳԵՏՐՈՍՅԱՆ

ԴԱՆԻԵԼԻ ՄԱՐԴԱՐԵՌՈՒԹՅԱՆ Թ ԳԼԽԻ ԱՍՈՐԵՐԵՆԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԴԱՍԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայոնի է, հայագիտության մեջ տիրում է այն տեսակետը, որ հնագույն հայկական թարգմանություններում աստվածաշնչական քաղվածքները թարգմանվել են բնագրին զուգընթաց և ոչ թե պատրաստի վիճակով փոխառվել Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից։ Այս տեսակետի գիտական հիմնավորումը տվել է Հ. Աճառյանը դեռևս 1913 թվականին¹։ Քննելով Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» հայերեն թարգմանության բնագիրը, Հ. Աճառյանն ապացուցեց, որ նրա սուրբգրական վկայակոչումները ոչ թե քաղված են Աստվածաշնչի մի պատրաստի հայերեն թարգմանությունից, ինչպես ենթադրում էր Գ. Տեր-Մկրտչյանը², այլ բնագրին համընթաց վերստին թարգմանվել են «Հակաճառության» թարգմանչի ձեռքով։ Դրանով է բացատրվում այն փաստը, որ հաճախ աստվածաշնչական միևնույն քաղվածքը Տիմոթեոսի երկասիրության հայերեն բնագրում վերաբռնը պարզապես է տարբեր ընթերցումներով։

Եղված տեսակետը մեկ անգամ ևս հաստատվում է Ափրահատ Զգոնի դավանարանական ժողովածուի ոսկեդարյան հայերեն թարգմանության շնորհիվ։ Ժողովածուի ասորական բնագրի ժթ ճառում (§ 8—9), որին համապատասխանում է հայերեն թարգմանության ժթ ճառը, ամրողությամբ մեջ է բերված Դանիելի գրքի Թ պլուսը։ Հայ թարգմանչի համար ժմվար չէր այդ ծավալուն հատվածը փոխ առնել Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից, սակայն նազերադասել է սուրբգրական մյուս վկայակոչումների նման այն նույնությամբ թարգմանել Ափրահատի ասորական բնագրից։

Ինքնըստինքյան ուշագրավ այս փաստը հնարավորություն է տալիս նաև մի այլ հետաքրքիր դատողության համար։ Ափրահատի հայերեն թարգմանության շնորհիվ պարզվում է, թե ասորերենից թարգմանվելու դեպքում Դանիելի գրքի հայերեն բնագիրը որքանով կտարբերվեր Աստվածաշնչի մեղ հասած հայերեն կանոնական թարգմանությունից³, որը կատարված է հոգնական նախօրինակի հիման վրա, և որքանով կարող էր ասորերենից կատարված թարգմանությունը սրբագրվել բայց հոգնական բնագրի ու ստանալ ներկայիս վիճակը։ Համեմատությունը ցույց է տալիս, որ տարբերություններն այնքան էտական

1. ՏԵ՛ս Հ. Աճառյան, Տիմոթեոս Կուզի և Ս. Գրքի նորաբեր թարգմանութիւնը, «Եղակաթ», Վաղարշապատ, 1913, էջ 1—22։

2. ՏԵ՛ս Գ. Տեր-Մկրտչյան, Տիմոթեոս Կուզի «Հակաճառութեան» հայ թարգմանութեան ժամակը և Սուրբ Գրքի երրորդ կամ «նորաբեր» հայ թարգմանութիւնը, «Արարատ», 1908, էջ 579—586։

3. Պարմանականորեն այդպես ենք կոչում Զոհրաւպյանի հրատարակությունը. տե՛ս «Առաջաւածաշունչ մատեան Հին և Նոր Կոտակարանաց», յաշխատասիրութենէ Հ. Զոհրաւպյան վարդապետի, Վենետիկ 1895։

շեն, որպեսզի խանգարեին այդ ինքը իրականությանը: Ուստի հայ պատմագիրների այն վկայությունը, որ ասորերենից կատարված աստվածաշնչական թարգմանությունները հետագայում սրբազրվել են հունական բնագրերի հիման վրա, բնագրական տեսակներից ես կասկածի տեղիր չի տալիս:

Նկատի ունենալով նշված հանգամանքների կարեռությունը, սառըն ներկայացնում ենք Դանիելի գրքի թ զլսի բնական-համեմատական բնագիրը ըստ Ափրահատի հայերեն թարգմանության, զուգահեռաբար բերելով նաև Զոհապէանի հրատարակության համապատասխան հատվածը՝ բնագրերի ընդհանրություններն ու տարբերություններն ակների դարձնելու նպատակով: Բնագիրը կազմել ենք հետեւյալ ձեռագրերի հիման վրա.

E = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 496 (1669 թ.), էջ 133ր—135ա.

F = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 497 (1671 թ.), էջ 239ա—241ր.

N = Նոր Ջուղա, ձեռ. 387 (1797 թ.).

S = Հոռմ, Վատիկանի գրադարան, ձեռ. արտ. В 59 (XVIII դ. 1740 թ.-ից առաջ).

T = Հոռմ, Վատիկանի գրադարան, ձեռ. արտ. V 9 (XVIII դ., շուրջ 1719 թ.).

W = Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, ձեռ. 360 (XVIII դ.).

Y = Վենետիկ, Մխիթարյան մատենադարան, ձեռ. 1357 (XVIII դ.).

a = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 433 (XIX դ.), էջ 62ր—63ա.

b = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 498 (XVIII դ.), էջ 124ա.

c = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 499 (XVIII դ.), էջ 145ր—146ա.

d = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2851 (1782 թ.), էջ 116ա—116ր.

e = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 3292 (XVIII դ.), էջ 103 ր—104ա.

f = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 3363 (1823 թ.), էջ 134ր—135ա.

g = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4407 (XVIII դ.), էջ 123ր—124ա.

h = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 6452 (XVIII դ.), էջ 97ր—98ա.

i = Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 9561 (XVIII դ.), էջ 148ր—149ա.

j = «Գիրք որ կոչի Զօռն արարեալ Սրբոյն Յակոբայ Երիցո Երանեալ Հայրապետին Մըծրին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ Հօրն մերոյ Գրիդորի Լուսաւորչին, սակա մանկանց նորոյս սիովնի», Կ. Պոլիս, 1824, էջ 315—316:

NSTWY ձեռագրերի համեմատության տվյալները քաղել ենք Ափրահատի հայերեն բնագրի՝ Գ. Լաֆոնտենի իրականացրած հրատարակությունից⁴, նրան համապատասխան պահպանելով նաև Մաշտոցի անվան Մատենադա-

⁴ Տե՛ս Guy Lafontaine, La version arménienne des œuvres d'Arhraate le Syrien, Corpus Scriptorum Christianorum Orientalium, t. 382—383, 405—406, 423—424. Arm. 7—8, 9—10, 11—12, Louvain, 1977—1980.

բանի № 496 և 497 ձեռագրերի ԵՒ հապավանիշերը: Լատինական այբուբենի փոքրատառերով նշել ենք այն ձեռագրերը, որոնք չեն օգտագործվել Գ. Լաֆոնտենի կողմից: Դժբախտաբար բնագրի մեծ մասը (թ. 3 խնդրել... — թ. 20... մինչդեռ ես) պահպանվել է միայն ԵՒ ձեռագրերում, ուստի բացառված չէ, որ վերակազմված բնագրում լինեն որոշ հետամուտ ընթերցվածներ: Ինչ վերաբերում է նախապատճիկ բնագրածների ընտրությանը, ապա այս հարցում վճռական ենք Համարել Ափրահատի երկի ասորական բնագրի⁵ տվյալները: Ափրահատի հայերեն ձեռագրերի ուղղագրական տարբերությունները հաշվի չենք տուել: Որոշ փափոխության ենք ենթարկել Զոհրապյանի կետագրությունը:

ԴԱՆԻԵԼ. Բ

Զոհրապյանի հրատարակություն

1. Յամին առաջնորդի Դարեհի որդույ Արշաւրայ ի զաւակէ Մարաց, որ թագաւորեաց ի թագաւորութեանն Քաղղեացւոց,

2. և Դանիել խելամուտ եղէ ի որոց թուոյ ամացն, որ եղել բան Տեառն առ Երեմիայ մարդարէ, ի կատարումն աւերածոյն Երուսաղեմի յամս Եթանասուն:

3. Եւ զարձուցի զերեսս իմ առ Տէր Աստուած իմ՝ խնդրել աղօթիք և խնդրուածովք, պահօք և խորդով:

4. Կացի յաղօթս առ Տէր Աստուած, զոհացայ և ասեմ՝ Տէր Աստուած, մեծդ և սրանշելի, որ պահես զուխտ և զողորմութիւն սիրելեաց քոց, որոց պահեն զպատուիրանս քո:

5. Մեղաք, անօրինեցաք, անիրաւեցաք և ապստամբեցաք և խոտորեցաք ի պատուիրանաց քոց, և յիրաւանց քոց:

6. Եւ ոչ լուար ծառալից քոց մարդարէիցն, որը խօսեցան յա-

ԴԱՆԻԵԼ. Բ

Սփրահատի հայերեն բարգմանուրյուն

1. Որ ամ մի էր Դարեհ արքայի որդույ Արտաշեսի յազգէ անտի Պարթեաց, որ թագաւորեաց ի բագաւորութեանն անդ Քաղղէացւոց, որ ամ մի էր թագաւորութեան նորա,

2. և Դանիել իմացայ եւ ի միտ առի ի զպրութենէ Համարոց ամաց, տեսի ես զի եղեւ պատզամ Տեառն, զի ասաց Երեմիա մարդարէ, իբրեւ կատարեցաւ եթանասուն ամ աւերածոյն Երուսաղեմի:

3. Համբարձի զաշս իմ ի վեր առաջի Տեառն Աստուածոյ՝ խնդրել աղաւթիւք և խնդրուածովք և պահովք և քրծաւ և մոխրով:

4. Եւ մատուցի զաղաւթս առաջի Տեառն Աստուածոյ, խոստովանեցայ և ասացի՝ Խնդրեմ ի քէն, Տէր Աստուած, մեծդ և ահեղ, որ պահես զուխտ և զողորմութիւն սիրելեաց քոց, ոյք պահեն զպատուիրանս քո:

5. Մեղաք եւ յանցեաք, անաւրինեցաք և ամբարշտեցաք, ապրատամբեցաք և խոտորեցաք ի պատուիրանաց և յիրաւանց քոց:

6. Եւ ոչ լուար ծառալից քոց և մարդարէից, զոր ինչ խաւեցանն

⁵ SE'v J. Parisot, Aphraatis Sapientis Persae Demonstrationes. „Patrologia Syriaca“ parts I, t. 1—2. Paris, 1894—1907.

նուն քո առ թագաւորս մեր և առ իշխանս մեր և առ հարս մեր և առ ամենայն ժողովուրդս երկրին:

7. Քո Տէր արդարութիւն, և մեր ամօթ երեսաց իրու յաւուր յայսմիկ առն Յուղայ և բնակչաց Երուսաղեմի և ամենայն Խորայելի՝ մերձաւորաց և Հեռաւորաց յամենայն երկրի, ուր ցրուեցեր զնոսա անդր վասն անհնաղանդութեան խրեանց, զոր անհնաղանդեցան քեզ, Տէր:

8. Մեր ամօթ երեսաց մերոց, և թագաւորաց մերոց և իշխանաց մերոց և հարցն մերոց, որք մեղաք:

9. Եւ Տեառն Աստուծոյ մերոյ զթութիւնք և քաւութիւնք, զի ապստամբեցաք ի Տեառնէ:

10. Եւ ոչ լուաք ձայնի Տեառն Աստուծոյ մերոյ՝ զնալ յօրէնս նորա, զոր ետ առաջի մեր ի ձեռն ձառայից խրոց մարդարէից:

11. Եւ ամենայն Խորայէլ անցին զօրինօք քովք, և խոտորեցան, զի մի լուիցեն ձայնի քում. և եկին ի վերայ մեր անէծն և երդումնն, գրեալ յօրէնս Մովսիսի ձառայի քո, Տէր, զի մեղաք նմա:

12. Եւ հաստատեաց զբանս խր, զոր խօսեցաւ ի վերայ մեր և ի վերայ դատաւորաց մերոց, որ դատէին զմեղ՝ ածել ի վերայ մեր շարիս մեծամեծս, որ ոչ եղն ի ներքոյ ամենայն երկնից, ըստ այնմ որ եղն յԵրուսաղէմ:

13. Որպէս և գրեալ է յօրէնսն Մովսիսի՝ Այն ամենայն շարիք եկին ի վերայ մեր, և ոչ աղաշեցաք զերեսս Տեառն Աստուծոյ մե-

յանուն քո ի վերայ թագաւորաց մերոց եւ մեծամեծաց եւ վասն հարց մերոց եւ ի վերայ ամենայն ժողովրդեան երկրի:

7. Քո է, Տէր, յաղթութիւն, և մեր՝ ամաւթ երեսաց որպէս այսաւր մարդոց Յուղայ և բնակչաց Երուսաղեմի եւ ամենայն Խորայիւնանց՝ Հեռաւորաց եւ մերձաւորաց ընդ ամենայն աշխարհս, ուր եւ ցրուեցեր զնոսա ի մեղս խրեանց, զի անաւրինեցան առ քեզ:

8. Տէր, մեր է ամաւթ երեսաց, թագաւորաց մերոց և մեծամեծաց եւ հարց մերոց, վասն զի մեղաք քեզ:

9. Տեառն Աստուծոյ է ողորմութիւն եւ ներել թողութեան մեղաք, վասն զի ապստամբեցաք ի նմանէ:

10. Եւ ոչ լուաք ձայնի բարբառոյ Տեառն՝ զնալ ըստ աւրէնս քո, խոտորեցան և ոչ լուան ձայնի բարբառոյ քո, եւ ածեր ի վերայ նոցադանէծս եւ ղճարուածս, որ ինչ զրեալ է յաւրէնս Մովսիսի ծառայի Աստուծոյ, վասն զի մեղաք առաջի նորա:

11. Եւ ամենայն Խորայէլնք անցին ըստ աւրէնս քո, խոտորեցան և ոչ լուան ձայնի բարբառոյ քո, զի մեծամեծ ածել ի վերայ մեր զմեծամեծ շարիս, զի ոչ եղեալ իրրեւ զնա ի ներքոյ երկնից, որպէս եղեն յԵրուսաղէմ:

12. Եւ հաստատեաց զբանս խր, զոր խաւսեցաւ վասն մեր և վասն դատաւորաց մերոց, ոյք դատէցինն զմեղ՝ ածել ի վերայ մեր զմեծամեծ շարիս, զի ոչ եղեալ իրրեւ զնա ի ներքոյ երկնից, որպէս եղեն յԵրուսաղէմ:

13. Ըստ զրոյն, զոր ասացեալն է յաւրէնս անդ Մովսիսի, եթէ՝ Այս ամենայն շարիք եկին հասին ի վերայ մեր, և ոչ մատուցաք

բայ՝ զառնալ յանիրաւութեանց հարցն մերոց և խելամուտ լինել ամենայն ճշմարտութեան քում:

14. Եւ զարթեաւ Տէր Աստուած մեր ի վերայ շարեացն մերոց և ած զնոսա ի վերայ մեր, զի արդար է Տէր Աստուած մեր ի վերայ ամենայն գործոց իւրոց, զոր արար ընդ մեզ, և ոչ լուար ձայնի նորա:

15. Եւ արդ, Տէր Աստուած մեր, որ հաներ զժողովուրդ քո յերկրուէն Եգիպտացւոց Հզօր Ճեռամբ, և արարեր քեզ անուն որպէս և յաւոր յայսմիկ, մեղաք և անօրինեցար:

16. Տէր, ամենայն ողորմութեամբ քով դարձի սրտմտութիւն քո, և բարձցի բարկութիւն քո ի քաղաքէ քումմէ յերուսաղեմէ և ի լեռնէ սրբոյ քոյ. զի մեղաք, և առ անօրինութեան մերում և հարցն մերոց Երուսաղէմ և ամենայն ժողովուրդ քո նզե ի նախատինս ամենեցուն, որ շուրջ զմեւք էին:

17. Եւ արդ լո՛ւր, Տէր Աստուած մեր, ազօթից ծառալի քոյ և խընդուռուածոց, և երևեցո՛ զերեսս քո վասն քո ի սրբութիւնն, որ աւերեցաւ:

18. Խոնարհեցո՛. Աստուած իմ, զուկն քո և լո՛ւր ինձ, բա՛ց զաշս քո և տե՛ս զապականութիւն մեր, և զքաղաքին քո, յորոյ վերայ կոչեցեալ է անուն քո: Զի ո՛շ առ արդարութեանց մերոց արկանեմբ զգութս մեր առաջի քո, այլ վասն բազում գթութեան քոյ, Տէր:

19. Լո՛ւր, Տէր, քաւե՛ա, Տէր, անսամ՛, Տէր, և մի՛ յամեր վասն

զաղաւթս առաջի Տեառն Աստուածոյ, զի ապաշխարեսցուք դանաւրէնութիւնս մեր եւ իմասցուք գիտել զհաւատս ճշմարտութեան քու:

14. Եւ զարթոյց Տէր զշարն եւ ած ի վերայ մեր, վասն զի արդար է Տէր Աստուած մեր յամենայն գործս իւր զոր արար, եւ ոչ լուար ձայնի բարբառոյ նորա:

15. Այսուհետեւ, Տէր Աստուած մեր, որ հաներդ զժողովուրդ քո յերկրէն Եգիպտացւոց ի Ճեռն Հզաւը եւ ի բաղուկ բարձր, եւ արարեր քեզ անուն որպէս եւ այսուր, մեղաք եւ ամբարշտեցար:

16. Տէր, ըստ ամենայն արդարութեան քում, զոր արարերդ ընդ մեզ, դարձի սրտմտութիւն բարկութեան քո ի քաղաքէ յերուսաղեմէ եւ ի սուրբ լեռնէ քումմէ. վասն զի ի մեղս մեր եւ յանաւրէնութիւն հարց մերոց ցրուեցաւ ժողովուրդ քո ընդ ամենայն աշխարհ, և զեւ Երուսաղէմ նախատ ամենայն ազդաց:

17. Այսուհետեւ լո՛ւր, Աստուած, զաղաւթս ծառալի քո եւ զիսնդուռուածս մեր, եւ լուսաւորեա՞ զերեսս մեր ի սրբութիւնն քո, որ աւերեցաւ:

18. Վասն անուան քո խոնարհեցո՛, Աստուած, զուկն քո եւ լո՛ւր, բա՛ց զաշս քո և տե՛ս զաւերածս մեր եւ զանմարդութիւնս մեր, և զքաղաքն, որ կոչեցաւ անուն քո ի վերայ նորա: Ոչ նթէ յարդարութիւն ինչ մեր ապաստանիցնմբ եւ մատուցանիցնմբ զաղաւթս առաջի քո, այլ ի քո յորդառատ ողորմութիւնն այդր:

19. Տէր, լո՛ւր, Տէր, արա՛ յանայութիւն, Տէր, ունկնդի՛ր ա-

քո, Աստուած իմ, զի անուն քո կոչեցեալ է ի վերայ քաղաքին քոյ:

20. Եւ մինչդեռ ես խօսէի և յազօթս կայի և խոստովան լինէի զմեղս իմ և զմեղս ժողովրդեանն Խորայելի, և արկանէի զգութս առաջի Տեառն Աստուծոյ իմոյ վասն լերինն սրբոյ,

21. Եւ մինչդեռ խօսէի յազօթսն, և ահա այրն Գարբիէլ, զոր տեսանէի յառաջնում տեսլիանն, թռուցեալ և մերձեցաւ առիս, իբրև ի ժամ երեկորին պատարագին:

22. Եւ խելամուտ արար զիշ և խօսեցաւ ընդ իս և ասէ՝ Դանիէլ, այժմ եկի խելամուտ առնել զրեզ:

23. Ի սկզբան ազօթից քոց ել պատգամ, և ես եկի պատմել քեզ, զի այր ցանկալի ես զու. արդ ա՛ծ զմտաւ զբանդ և ի մի՛տ առ պտեսիլոյ:

24. Եւթանասուն եւթներորդք համառոտեցան ի վերայ ժողովրդեան քոյ և ի վերայ քաղաքին սրբոյ՝ ի վախճանել մեղաց և ի կնքել անօրէնութեանց և ի շնչել անիրաւութեանց և ի քաւել ամպարշտութեանց և ի գալ յաւիտենական արդարութեանն և ի կնքել տեսլեան և մարգարէի և յօժանել սրբութեան սրբութեանցն:

25. Եւ գիտասցես և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի, և ի շինելն երուսաղեմի մինչև ցօծեալն առաջնորդ՝ Եւթներորդք եւթն, և Եւթներորդ վաթսուն և երկու. և զարձցին և շինեսցին Հրապարակքն և պարիսպք, և նորոգեսցին ժամանակք:

րա եւ մի՛ յամենար վասն անուան քո, Տէր Աստուած իմ, վասն զի անուն քո կարդացաւ ի վերայ քաղաքիս եւ ի վերայ ժողովրդեան քո:

20. Մինչդեռ ես յազաւթս կայի Եւ խոստովանէի զմեղս իմ եւ զմեղս ժողովրդեան իմոյ Խորայելի, եւ արկանէի զպազատանս խնդրուածովք առաջի Տեառն Աստուծոյ իմոյ վասն սուրբ լերինն Աստուծոյ իմոյ,

21. Եւ մինչդեռ ես յազաւթս անդ խաւսէի, եւ զայր Գարբիէլ, զոր տեսի ի տեսլեան յառաջագոյն, թռչելով թռեաւ եւ սլացաւ, եկն յերկնից եւ մերձեցաւ առիս ի ժամ երեկորին պատարագին:

22. Եկն խաւսեցաւ ընդ իս եւ ասէ ցիս՝ Դանիէլ, այժմ խոկ եկի, զի ուսուցից քեզ:

23. Անդրէն ի սկզբան աղաւթից քոց ել պատգամ եւ վճիռ, եւ ես եկի ցուցանել քեզ, վասն զի ցանկալի ես. ի մի՛տ առ ի պատգամի աստ եւ իմացի՛ր ի տեսլեան անդ:

24. Եւթանասուն եւթներորդք հանդիցեն ի վերայ ժողովրդեան քոյ և ի վերայ քաղաքի սրբութեան քոյ՝ լուլ զպարտիսն եւ կատարել զմեղս, առ ի բերել զարժանն ի սկզբանէ եւ առ ի կատարել զտեսիլս եւ զմարգարէս, եւ ի Քրիստոս Սուրբն Սրբոց:

25. Եւ գիտասցես եւ իմացիս յելից բանի աստ, զառնալ եւ շինել վերուսաղէմ, եւ գալ արքայի Քրիստոսի եւթն եւթներորդք, եւ վաթսուն եւ երկու եւթներորդք. զարձցի եւ շինեսցէ զերուսաղէմ՝ զփողոցս եւ զհրապարակս նորա մինչեւ ի վախճան ժամանակի:

26. Եւ յետ վախուն և երկուց եւթներորդաց բարձրի օծութիւնն, և իրաւունք ոչ իցեն ի նմա. և քաղաքն և սրբութիւնն ապականեսցին առաջնորդաւն հանդերձ, որ գայցէ. և զնշեսցին հեղեղաւ, և մինչև ի վախճան պատերազմին համառոտելոյ կարգեսցէ զալականութիւն. և զօրացուացէ զուխտ բազմաց եւթներորդ մի և կէս եւթներորդի, դադարեցուացէ դսեղանս և զպատարագս, և մինչև ի ժայրս անկեանն ապականութիւն, և մինչև ցվախճան և ցտագնալ կարգեսցէ ի վերայ ապականութեանն:

27. Եւ զօրացուացէ զուխտ բազմաց, եւթներորդ մի և կէս եւթներորդի բարձրին զոհք և նուէրք. և ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կացցէ, և մինչև ի վախճան ժամանակի կատարած տացի ի վերայ աւերածին:

26. Եւ յետ վախուն և երկուց եւթներորդաց սպանցի քրիստոս, եւ նա ոչ իցէ. եւ քաղաքն սրբութեան ապականեսցի ընդ արքային, որ եկն. եւ ի վախճանին գերփումն գերութեան մինչ ի վախճան պատերազմի համառաւիցն ապականութեան. եւ հզարացուացեն կտակարանք զրազումս եւթներորդ մի եւ կէս եւթներորդի եւ խափանեսցէ զողշակէզս եւ զպատարագս, եւ ի վերայ թեւոց պղծութեանն ապականութիւն:

ՏԱՐԸԹԵՐՑՎԱԾՆԵՐ ԱՓՐԱՀԱՏԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԴՄԱՆՈՒԹՅԱՆ

1 — EF է — Ե արքային — EF ի յազգէ — Կ պարթեայ — EF թագաւորեցաւն — NSTWYabcdeghi թագաւորութեան

2 — NSTWYabcdeghi չիք որ ամ մի էր թագաւորութեան նորա — WY չիք եւ Դանիել — ա և ես Դանիել — NSTWYabcdeghi չիք իմացայ... մարզարէ — EF իրը — WY չիք իրը... երուսաղեմի

3 — WY չիք համբարձի... Աստուծոյ — F աղաւթաւք

7 — F ցըռւեցերն

9 — EF ի նմանէն

10 — EF եղ փիս ետ (ասոր. ցին) — E և մարգարէից

11 — F ածէ — EF Մովսէսի

12 — F իրը

13 — EF Մովսէսի — F եկին եկին հասին — F ի մեր վերայ

14 — F ամենայն

15 — E արար

16 — F չիք և (ի սուրբ) — F յանաւրէնութիւնն

19 — EF մեր փիս լուր (ասոր. ՏՄ)

20 — NSTabcdeghj և կացի յազօթս փիս յազաւթս կայի — NSTabcdeghj խոստովան եղէ — NSabdhj չիք իմոյ — NST արկանէր — STWYacdehi լիրին — NSTWY abcdeghi չիք Աստուծոյ իմոյ 2°

21 — ա աղօթս — NSTWYabcdeighig չիք և (զայր) — Բոլոր ձեռաղբերն ունեն զայր փիս զայր. ուղղել ենք ըստ ասորերենի (ցեր). հայերենի օրենքներով պետք է լիներ այր — EF տեսի ես — NSTWYabcdeighij չիք թոշելով... ուացաւ — Կ յերկնից եկն փիս եկն յերկնից — NSTWYabcdeighi երեկոյին, յ երեկոյի

22 — NSTWYabcdeighij չիք եկն — NSTWYabcdeighij չիք ցին — EF արժեման

- 23-ի ի սկզբանէ—EF աղաւթիցն—ա և ի միտ—NSTWYabcdeighij չիք ի տեսլեան
անդ
- 24—Ն եւթներորդքն—EFab քո 1°—EFa քո 2°—NSTWYabcdeighij զմեղոն
- 25—Y չիք և 1°—EFNSTWadeg յիշել փխ շինել—Wj չիք և զալ . . . զերուսազէմ—
և կալ փխ զալ—N արքային—F եւթն եւ—FYiij չիք եւ վաթսուն եւ երկու եւթներորդք—
Ես շինեցի 2°—Ե երուսազէմ 2°—Nbli մինչչև
- 26—Nbceighij չիք եւ 2°—իւ ի վախճանին ընթերցվածն ունի միայն յօրինակը. մյուս
բոլոր ձեռագրերում ի-ն բացակայում է, իսկ վախճանին բառի փոխարեն EF ձեռագրերը
տալիք են վախճանն—EWYceighij զերութեանն—ա կատարածի փխ պատերազմի—ENSTWY
abcdeighij ապականութեան—NSTWYbcdeighij եւթներորդքի մի—adghi թւոց—NSTWY (?)
ի պղծութեան—EFTWYcegi ապականութեանն, ի չիք

Л. А. ТЕР-ПЕТРОСЯН

IX ГЛАВА КНИГИ ДАНИИЛА, ПЕРЕВЕДЕННАЯ С СИРИЙСКОГО НА АРМЯНСКИЙ В V В.

(Р е з ю м е)

Статья посвящена публикации IX главы Книги Даниила, которая полностью цитирована в армянском переводе сборника Афраата, известного сирийского писателя IV в. Публикация позволяет делать интересные выводы, относящиеся к истории армянского перевода Библии.

L. H. TER-PETROSSIAN

LE IXe CHAPITRE DU LIVRE DE DANIEL TRADUIT DU SYRIAQUE EN ARMENIEN AU Ve SIECLE

(R é s u m é)

L'article est consacré à la publication du IXe chapitre du Livre de Daniel, qui est entièrement cité dans la traduction arménienne du recueil d'Aphraate, célèbre écrivain syrien du IVe siècle. La publication permet d'en venir à d'intéressantes conclusions concernant l'histoire de la traduction arménienne de la Bible.